ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 ապրիլի 2026 թվականի N 459 - Ն

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՎ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԱՎԻԱՏՈՄՄԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածը և «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Մերձավոր Արևելքում ռազմական գործողություններով և անվտանգային իրավիճակով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետություն վերադարձի ավիատոմսերի համար փոխհատուցում տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ ապահովել փոխհատուցման հայտերի ուսումնասիրության գործընթացի կազմակերպումը՝ սահմանելով անհրաժեշտ հսկողական և ստուգողական մեխանիզմներ:

3. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության

կողմից փոխհատուցման հայտերի ուսումնասիրության շրջանակներում անհրաժեշտ ստուգումներ իրականացնելու համար տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից՝ առցանց ձևաչափով:

4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետով սահմանված ժամկետում ապահովել հաստատված հայտերի հիման վրա փոխհատուցումների տրամադրումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

6. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2026 թվականի փետրվարի 28-ից մարտի 25-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրով գնված ավիատոմսերի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

09.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ